ԴԱՍ 19

Էջ 151

Առաջադրանք

✍ *Կարդացեք սփորև բերվող իրավիճակները և որոշեք, թե որ դեպքում է կիրառվում ուժ առանց իշխանության, իսկ որ դեպքում՝ իշխանություն.*

- *Ավագ եղբայրը կրփսեր քրոջն ու եղբորը չի թողնում օգտվել համակարգչից:*
- *Զկնորսները ձուկ որսալու նպատակով պայթուցիկներ են օգտագործում:*
- *Շինարարական կազմակերպությունը պայթեցնում է կիսավեր շինությունը՝ դրա տեղում նորը կառուցելու նպատակով:*
- *Ճանապարհային ոստիկանության ներկայացուցիչը կանգնեցնում է թույլատրվածից արագ ընթացող մեքենան:*
- *Ուսուցիչը դիտողություն է անում դասից ուշացող աշակերտին:*
- *Անցորդը դիտողություն է անում ծառի ճյուղը կոտրող երեխաներին:*

✍ *Կարդացեք վերջին շաբաթվա լրագրերը կամ ինտերնետային լրահոսը և դուրս գրեք առանց իշխանության ուժի և իշխանության կիրառման երկուական դեպք: Լրացրեք հետևյալ աղյուսակը.*

Աղբյուրը (լրագրի անվանումը կամ կայքի հասցեն, ամսաթիվ)	Ուժի կիրառում առանց իշխանության	Իշխանության կիրառում